

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԱՍՈՐԻՆԵՐԻ ԷԹՆՈԳԵՆԵՏԻԿ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ**  
(Ըստ Վերին Դվինի ասորիների մարդաբանական տվյալների)

ՆՎԱՐԴ ՔՈՉԱՐ, ԱՆԱ ՓԱԼԻԿՅԱՆ, ԿԱՐԻՆԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Ռասայագիտական դասակարգումների մեջ «արմենոիդ» կամ նոր դասակարգումով՝ «առաջավորասիական», ուսայական տիպը համարվում է հարավելութեղիների դասական և ամենավառ արտահայտված ձևը, որի հիման վրա մարդաբանական տարրեր համեմատումներ են կատարվում: Արմենոիդ տիպի առաջացման հարցին նվիրված են բազմաթիվ աշխատություններ, քանի որ այդ խնդիրը մեծ դեր է խաղացել Առաջավոր Ասիայի, Կովկասի և Հարավային Եվրոպայի մարդաբանական առանձնահատկությունների լուսաբանման հարցում: Ինչպես գրել է հայտնի գիտնական, խորհրդային մարդաբանության հիմնադիրներից Վ. Վ. Բունակը, «...արմենոիդ տիպի գենեզիսի հարցը՝ իր էթնիկ ու պատմական ձևակերպումներով, հանգում է այդ ուղղունների հնագույն ժողովուրդների ու մշակույթների ծագման հարցին»<sup>1</sup>:

XX դարի երկրորդ կեսում մարդաբան գիտնականները, համարելով, որ Առաջավոր Ասիայում վերոհիշյալ ուսայական տիպով օժտված են եղել ոչ միայն հայերը, այլ նաև շատ ուրիշ ժողովուրդներ ու էթնիկական խմբավորումներ, ավելի նպատակահարմար են համարել այդ տիպին տալ «առաջավորասիական» անվանումը, քանի որ «արմենոիդ» տերմինը ավելի սերտ կապված է ազգային պատկանելության հետ<sup>2</sup>: Եվրոպական մարդաբանական դպրոցի հայտնի ուսայագետ Ի. Դենիկերն այդ տիպն անվանել է «ասիրոիդ»՝ գտնելով, որ դրան բնորոշ հատկանիշներն առավելագույնս ներկայանում են ասորիների ճնշող մեծամասնության մեջ<sup>3</sup>:

Առաջավոր Ասիայի տարածքում պեղված գանգարանական նյութերի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սկսած մ. թ. ա. IV հազարամյակից և նույնիսկ ավելի վաղ այս շրջանում գերիշխել է մարդու հատակ արտահայտված եվրոպենիդ ուսան և հատկապես՝ նրա «առաջավորասիական» տարրերակը: Այս տիպին են պատկանել հին շումերները, աքաղները, որոնց գանգարանական հավաքածուն պեղվել է հարավային Միջազգետքի Ալ-Ուրափի բնակավայրի մոտ: Նմանատիպ են եղել նաև իներերը, խուռիները, ասորիներն ու հայերը: Վերոհիշյալ փաստին վերաբերող պեղածո ուսկրանյութեր հայտնաբերվել են Առաջավոր

<sup>1</sup> В. В. Б у н а к. Crania Armenica.– Труды НИИ антропологии при МГУ. Вып. II, М., 1927, с. 200-207.

<sup>2</sup> В. П. А л е к с ե և. Происхождение народов Кавказа. М., 1974, с. 83-108.

<sup>3</sup> И. Д е н и к е р. Человеческие расы. СПб., 1902, с. 16.

Ասիայի ու Միջազգետքի այլ շրջաններից ևս. Իրանի հյուսիսում՝ Դամգան շրջանում, Փոքր Ասիայի հյուսիսում՝ խեթերի մայրաքաղաքում՝ Բողազ-Քյոյի մոտ գտնվող Ալիշար բնակավայրում և այլուր: Բացի դրանից այդ տարածաշրջանների հնագույն ժողովուրդների մարդարանական տիպի մասին հստակ պատկերացում



Նկ.1. Սարգոն II-ի պալատի դարպանների հանձար-պահապանի ռանդակախն պատկերը:  
ինչպէս նաև մշակութային այլ նմուշների մեջ որևէ ուրիշ ռասայական տիպ չի հայտնաբերվել<sup>6</sup>:

Կանգ շառնելով Հին Արեելքի մասնագետների բազմաթիվ և հաճախ իրարամերժ վարկածների վրա, ասենք միայն, որ էթնիկական ու լեզվական բարդ ու բազմերանգ գունապատճենի վրա են կազմավորվել տարրեր հնագույն ժողովուրդներ, որոնց մեծ մասը վաղուց ի վեր վերացել է աշխարհի բեմահարթակից: Այսօր միայն հայերն ու աստրիներն են, որ, կրելով նախնիների մարդարանական կերպարը, իրենց ճնշող մեծամասնությամբ ներկայանում են մեզ արմենոյի ռասայական կերպարով: Իհարկե, արմենոյի հատկանիշներով օժտված են նաև հարավելքոպական, միջինասիհական և առաջավորասիհական այլ ժողովուրդների որոշակի խմբեր, սակայն նրանք նույնքան միատարր չեն արմենոյի ռասայական կերպարի տեսակետից, որքան հայերն ու աստրիները:

Ժամանակակից աստրիներն իրենց Հին Աստրեստանի բնակչության հետնորդներն են համարում, սակայն կան նաև հնագետների ու լեզվաբանների այլ վարկածներ, ըստ որոնց ժամանակակից աստրիներն արեելքից դեպի Աստրեստան ներխուժած արամեական քոչով ցեղերի հետնորդներն են: Նման դեպքերում է, որ մարդարանական ռուսական սիրությունները միայն կարող են որոշակի հստակություն մտցնել որևէ ժողովրդի ծագումնարանական ինդիքներում, քանի որ

<sup>4</sup> Յ. Յ. Պօգինսկի, Մ. Գ. Լեւին. Անտրոպոլոգիա. Մ., 1978, ս. 483–493.

<sup>5</sup> Վ. Բ. Նիկուտինա. Վավիլոնско-ասսիրийская литература.— В сб.: Литература древнего Востока. М., 1971, с. 63.

<sup>6</sup> Վ. Կ. Աֆանասьевա. Мотив “Гильгамеш и кедр” в глиптике.— В сб.: Ассириология и египтология. Л., 1964, с. 24–32.

գրավոր լեզվի պատմությունը սկսվել է մեզնից ընդամենը 200 սերունդ առաջ, իսկ նյութական մշակույթի գուածոները ոչինչ չեն ասում այն մասին, թե այդ մշակույթը ստեղծողներն ապագա սերունդները թողել են արդոք, թե ոչ: Հետևաբար, լեզվական ու հնագիտական վերլուծությունները կարող են ցույց տալ պատմական գարգացման շղթայի որևէ օղակը միայն:

Մարդկային խմբավորումների մեջ հասարակական պատմությանը գուգրնթաց տեղի են ունենում նաև շատ կարևոր այլ գործընթացներ, որոնց ազդեցության թիրախն է դառնում այդ պատմությունը կերտող մարդք: Դրանք ժառանգարանական գործընթացներն են, որոնք կապված են սերունդների թե՝ պատմական և թե՝ կենսարանական հաջորդականության հետ: Ժառանգարանության տեսակետից որպես ժամանակի միավոր հանդես է գալիս սերունդը: Սերունդներում գեների ճակատագրերը կարող են տարբեր լինել. գենը կարող է փոխանցվել կամ չփոխանցվել հաջորդ սերնդին: Կարող է փոխանցվել կրկնօրինակների ձևով կամ փոփոխված՝ մուտացիոն, վիճակում: Այսինքն՝ կարող են առաջանալ նոր ֆունկցիա կրող և նոր ճակատագրի ունեցող գենային գուգորդումներ<sup>7</sup>: Գեները ուղերձ են մեր անցյալից և պատմական ու կենսարանական մեծ տեղեկատվություն են պարունակում: Եվ եթե մենք հաստատ չգիտենք, թե մեր հեռու նախնիներն արդյոք տվել են այն սերունդները, որոնք ապրում են այսօր, ապա մենք համոզված ենք, որ ժամանակակից մարդկանց յուրաքանչյուր գենն ունի իր նախնին: Ժամանակակից ցանկացած ժողովուրդ իր նախնիների ամեն տեսակ հատկանիշների ժառանգորդն ու շարունակողն է: Իսկ եթե ապացուցված է, որ որևէ հատկանիշ հաստատուն կերպով, առանց շեղումների ժառանգվում է ծնողների սերնդից երեխաների սերնդին, ապա այդպիսի հատկանիշների ուսումնասիրումը հնարավոր է դարձնում տասնյակ ու հարյուրավոր անցյալ սերունդների մարդարանական բնորոշ հատկանիշների մասին պատկերացում կազմելը, այսինքն՝ ծագումնարանական արմատներին հասնելու հնարավորություն է ստեղծվում:

Եթե այսօր աշխարհում համարյա բոլոր ժողովուրդները քիչ թե շատ ուսումնասիրված են մարդա-ժառանգարանական տեսակետից, ապա ասորագիտությունը մինչև օրս գուրկ է մնացել ասորիներին վերաբերվող այդ կարևորագույն ասպարեզի լուսաբանումից: Մենք կարևորում ենք այդօրինակ հետազոտությունները, որովհետև ասորիների գենոտիփը դրսորվում է որպես արմենոիդ հատկանիշների համալիր ֆենոտիպ (արտաքին հատկանիշներ), թեև լեզվական առումով նրանք պատկանում են սեմական լեզվաբնանիքին: Այս տարիմաստությունն ավելորդ անգամ ապացուցում է, որ լեզուն ու մշակույթը կարող են տարածվել անկախ մարդարանական տիպի տարածումից, և միայն մարդարանական հատկանիշները կարող են խոսել ժողովրդի առաջացման արմատների մասին:

Մեր աշխատանքի նպատակն է մարդարանության և պոպուլյացիոն գենետիկայի ժամանակակից մեթոդներով, ինչպես նաև ժողովրդագրական ցուցանիշների օգտագործման միջոցներով դիմել հետաղարձ (ուսումնական վերլուծությունը)

<sup>7</sup> Ю. Г. Рычков. Генохронология исторических процессов.– Вопросы антропологии. Вып. 77, 1986, с. 3–17.

յանք, որոշելու համար ուսումնասիրվող էթնոսի կազմավորման տեղն ու ժամանակը, մայրական նախախմբից նրա տարրերակման պատճառներն ու դրանց խթանող գործոնները, առանձին խմբերի մեկուսացման ու մետխացման գործութացները և ազգակցական կապերի բացահայտումը հարևան ժողովուրդների հետ: Այդ նպատակով մենք ժամանակակից ասորիների խմբում ուսումնասիրերել ենք ժառանգականապես կայուն այնպիսի ռասայական հատկանիշներ, ինչպիսիք են՝ դիմագծերը, մազերի, աչքերի, մաշկի գույնը, ատամների ձևաբանությունը (օդոնտոլոգիական հատկանիշներ), ձեռնաթաթի մաշկի գծանկարները (դերմատոզիֆիկ հատկանիշներ): Նյութերի հավաքման աշխատանքները տարվել են Վերին Դվին գյուղի ասորիների համայնքում, որոնց հետազոտման սկզբնական արդյունքները ներկայացնում ենք առաջարկվող աշխատության մեջ:

Ռասայական հետազոտությունների մեջ այսօր մեծ տեղ է տրվում ատամնաբանական տվյալներին, որոնք ժառանգականորեն դետերմինացված են, հետևաբար, թույլ են տալիս ռասայինագնոսութիւն վերլուծումներ կատարել: Ատամների ձերք, դիմագծը, մակերեսի ձևաբանությունը խոսում են ոչ միայն տարիքի, այլև ռասայական պատկանելության մասին: Ասորիների օդոնտոլոգիական հատկանիշները հավաքվել են ատամնաբուժության մեջ օգտագործվող մոմե սալիկների վրա ստացված դրոշմների ստանդարտ մեթոդներով, ինչպես նաև վիզուալ գննությունների միջոցով: Դրանք ընթերցվել, սիստեմավորվել և գրանցվել են մարդաբանության մեջ կիրառվող օդոնտոլոգիական քարտերի մեջ: Ստացված արդյունքները վերլուծվել են ընդունված մաթեմատիկական հաշվարկների, բիոմետրիական ու պոպուլյացիոն գենետիկայի մեթոդների միջոցով<sup>8</sup>:

Այս աշխատության մեջ մենք միտումնավոր չենք ներկայացնում բազմաթիվ այն բանաձևերը, աղյուսակներն ու գործակիցները, որոնց օգնությամբ ընդհանրապես իրագործվում են մարդաբանական հետազոտումները: Դրանք ընթերցողին կարող են բարդ ու անհասկանալի թվալ, իսկ հետաքրքրվողները կարող են մանրամասները գտնել հղված գրականության մեջ: Ատամնաբանության ոլորտում կարող ենք ասել, որ ասորիներն օժտված են հատկանիշների այնպիսի համալիրով, որը կազմում է եվրոպեոիդ ռասայի հարավային գրացիլ տիպի «արևմտյան» ենթատիպի ձևաբանական միջուկը: Ընդ որում, այդ առանձնահատկությամբ հիմնականում օժտված են հայերը, որի պատճառով մարդաբան Վ. Կաշիրաձեն ատամնաբանական համակարգի այս ձևն անվանել է «հայկական»<sup>9</sup>: Ասորիներին ու հայերին իրար հետ համեմատելիս տեսնում ենք, որ երկու խմբերն եւ աչքի են ընկնում դիմատեմայի և կրառությունները շատ ցածր արժեքներով, մետակոնիդի ծնկաձև ծալքի բարձրագույն արժեքներով, բահանման կտրիչների լրիվ բացակայությամբ կամ չնշին տոկոսով, ինչը խոսում է այն մասին, որ ուսումնա-

<sup>8</sup> Մեթոդների մասին տես՝ Ա. Դ. Յու Յ օ վ. Օdontologiya. Методика антропологических исследований. М., 1968, с. 197. L. L. C a v a l l i - S f o r z a, W. F. B o d m e r. The Genetics of Human Populations. San Francisco, 1971, p. 965.

<sup>9</sup> Վ. Կաշիրաձե. Օdontologiya armeni. – Биологический журнал Армении. Т. XLIII, 1990, № 4, с. 285-295.

սիրված խմբերը լրիկ ազատված են արևելյան հատկանիշների համալիրից, այսինքն՝ տվյալ համակարգում խսպառ բացակայում են մոնղոլոիդ հատկանիշները:

Ասորիների արտաքին չափագրական ու նկարագրական հատկանիշների մասին կարելի է ասել, որ այս բնագավառում նույնպես ի հայտ են զալիս արմենոիդ տիպին բնորոշ արտահայտված հատկանիշներ: Թե՛ զլիկի բրախիկեֆալիայով (կլորագլխությամբ), թե՛ բեղ-մորուքի ու մազածածկույթի թափ աճով, թե՛ քթի ուրույն ձևով և ճակատի շեղությամբ հայերն ու ասորիները գրեթե չեն տարբերվում միջյանցից: Այս իրողությունն ապացուցելու համար ստորև բերում ենք երկու համեմատական պարզ առյուսակներ, որոնց մեջ զետեղված միջինացված տոկոսային արժեքները հստակ ցույց են տալիս հայերի ու ասորիների գրեթե միակերպությունը: Պետք է նշել, որ բոլոր չափսերը վերցվել են ըստ անթրոպոլոգիայում ամրագրված չափագրական մեթոդների<sup>10</sup>, իսկ նկարագրական հատկանիշների միջինացված արժեքները որոշվել են ըստ Բունակի, Ֆիշերի և Լուշանի սանդղակների (շկալաների)<sup>11</sup> (աղ. I, II):

Արմենոիդ հատկանիշների վառ արտացոլումը անգեն աչքով և առանց որևէ չափագրության երևում է ասորի տղամարդու դիմազգերում, որի երեք դիրքերով արված լուսանկարների վրա հստակ երևում են թե՛ զլիկի ձևը, թե՛ քթի ուրույն ձևը (երկար արծվաքիթ, կախ քթածայրով), թե՛ ուղիղ ծնոտներն ու միջին լայնության դեմքը, մազերի գույնն ու որակը (նկ. 2):

Աղ. I. Հայերի և ասորիների չափագրական հատկանիշների համեմատական արժեքները

Հատկանիշ	Ասորիներ			Հայեր		
	n	m %	σ	n	m %	σ
մարմնի երկ-ը (սմ-ով)	99	165.0	5,3	102	165,9	5,0
զլիկի լայնական տրամ. (մմ-ով)	99	181.8	6,8	102	184,0	4,9
զլիկի երկայն. տրամ. (մմ-ով)	99	155,7	5,4	102	155,9	4,9
զլիկի ցուցանիշը	99	85,7	3,7	102	84,6	3,0
այտուկրերի տրամ. (մմ-ով)	99	141,3	4,9	102	142,1	5,9
ստործնոտային տրամ. (մմ-ով)	99	107,5	6,4	102	110,2	5,9
դեմքի ֆիզ. բարձր. (մմ-ով)	99	180,1	8,9	102	179,2	7,6
քթի լայն. (մմ-ով)	99	36,4	2,8	102	36,7	2,3
քթի բարձր. (մմ-ով)	99	57,0	3,6	102	55,4	3,6
քթի ցուցանիշը	99	66,3	6,0	102	66,2	6,3

Նշենք, որ ո-ը՝ ուսումնասիրված անհատների քանակն է, ո-ը՝ հատկանիշի միջինացված տոկոսային արժեքը, իսկ օ-ն՝ տվյալ խմբի մեջ հատկանիշի տարբերակումների ցուցանիշն է, որի ստացված փոքր արժեքները խոսում են ուսումնա-

<sup>10</sup> В. В. Б у н а к. Антропометрия. М., 1941.

<sup>11</sup> Я. Я. Р о г и н с к и й, М. Г. Л е в и н. Указ. раб., с. 41–122.

սիրվող խմբի հոմնգենության՝ միատարրության մասին: Որպես համեմատվող հայերի խումբ ընդգրկվել են Աշտարակի բնակիչները՝ ուսումնասիրված Մ. Արդուշելիշվիլու կողմից<sup>2</sup>:

*Աղ. II. Հայերի ու ասորիների նկարազրական հատկանիշների համեմատական արժեքները*

Հատկանիշներ	Ասորիներ		Հայեր	
	n	m %	n	m %
մաշկի գույնը բացից թուխ	99	61,4	102	74,0
մաշկի գույնը թուխ	99	38,6	102	26,0
բաց գույնի աչքեր	99	6,0	102	3,9
խառը աչքեր	99	58,7	102	55,2
մուգ աչքեր	99	35,3	102	40,2
մուգ կամ սև մազեր	99	100	102	100
բեղ-մորուքի թաղ աճ	99	84,3	102	74,7
կախ քթածայր	99	47,4	102	45,0
մարմնի մազածածկույթի չափազանց ուժեղ աճ	99	71,1	102	80,6

Մազերի գույնը որոշվել է Ֆիշերի սանդղակով, աչքերի գույնը՝ Բունակի սանդղակով և մաշկի գույնը՝ Լուշանի սանդղակով:




Նկ. 2. Ասորի տղամարդու դեմքը (առջևից, կիսակողքից, կողքից):

*Անցնելով դերմատոզիֆիկական հատկանիշներին՝ ասէնք, որ դրանք համարվում են ռասայական, հիմք են տալիս տարսոնոմիկ վերակառուցումներ կատա-*

<sup>12</sup> М. Г. А б д у ш е л и ш в и լ и. Об антропологическом составе населения Армении.– В кн.: Антропология армян, сб. IV, М., 1963, с. 3-27.

րելու համար և, լինելով իխտ ժառանգական, բավականին արդյունավետ են մարդկային պոպուլյացիաների ծագումնաբան պատմությունն ուսումնասիրելիս: Ինչպես հայտնի է, աշխարհի տարրեր ժողովորդների մոտ ձեռնաթաթի մաշկի գծանկարներն ու նախշերը իխտ տարրերակվում են, քանի որ դրանք գտնվում են զեների հսկողության տակ: Այդ հատկանիշները պոպուլյացիաներում իրար հետ համեմատելիս վստահորեն կարելի է ասել, որ ֆենոտիպիկ տարրերակումներն արտացոլում են զեների բաշխման տարրեր զուգակցումները: Դերմատոգլիֆիկական հատկանիշների համալիրը ասորիների մոտ ևս դրսևորվում է որպես «արմենոիդ» ռասայական համալիր:

Այստեղ նպատակահարմար ենք համարում ներկայացնել ասորիների ու հայերի համեմատումն ըստ որոշակի հատկանիշների, որոնք առավելագույնս խոսուն են ռասայական բնութագրումների համար: Համեմատումը կատարվել է պոլիգոնների (բազմանկյունիների) միջոցով, որոնք պատկերավոր ցույց են տալիս հատկանիշների հանդիպման հաճախականության վիզուալ նմանությունը: Պոլիգոնի կենտրոնը համապատասխանում է 0 %-ի, իսկ ամեն շառավիղն ըստ տվյալ հատկանիշի հավասար է 100 %-ի: Վերցված են 8 հատկանիշներ. մատների հանգույցները, պտուտակները, հիպոքենարի նախշերը,  $Tb/I$ -ը, առանցքային տրիուղղուսները,  $C(X+0)$ -գծերի տիպը,  $D_{11}$  և  $D_7$  գծերի տիպը: Ներկայացված է հայերի էթնոտարածքային տարրեր խմբերի միջինացված ցուցանիշների պոլիգոնը<sup>13</sup> և ուսումնասիրված ասորիների հաշվարկված պոլիգոնը (նկ. 3):



Նկ. 3. Հայերի ու ասորիների համեմատական պոլիգոնները:

Ինչպես երևում է նկարից, ասորական և հայկական բազմանկյունիների ուրվապատկերները գրեթե չեն տարրերվում:

<sup>13</sup> Н. Р. Кочар. Антропология армян. Дермотоглифика и популяционная структура. Ереван, 1989, с. 63-69.

Այսպիսով, մարդաբանական տարբեր բնագավառների մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ասորիները ժառանգական բոլոր հատկանիշներով շատ մոտ են հայերին: Երկու խմբերի մոտ էլ ձևաբանական տվյալները բնութագրվում են զլիսի բարձր ցուցանիշով (բրախիկեֆալիայով), միջին և միջինից ցածր հասակով, միջին բարձրության դեմքով, բարձր արծվաքթերով, դեմքի ու մարմնի խիստ մազակալմամբ, մուգ մազերով և խառը գույնի աչքերով, դեմքի շեշտակի պրոֆիլավորմամբ: Ասումնաբանության և մաշկանախշաբանության բնագավառները ևս ցուցաբերում են հստակ արտահայտված «արմենոիդ» համայիրներ: Հետեւաբար, ենելով նախնական տվյալներից, կարելի էնթադրել, որ ասորիների էթնոսի կազմավորման արմատներն Առաջավոր Ասիայում պետք է փնտրել արմենոիդների կազմավորման օջախներում, իսկ ժամանակակից հայերի հետ սերտ մոտիկությունը կարելի է բացատրել վաղ անցյալից մինչ օրս պահպանված ընդհանուր նախնիների գեների սոլուսային մեծ հարաբերակցության փաստով:

## ЭТНОГЕНЕТИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ ПРОЖИВАЮЩИХ В АРМЕНИИ АССИРИЙЦЕВ

(По антропологическим данным ассирийцев Верин Двина)

*НВАРД КОЧАР, АННА ПАЛИКЯН, КАРИНЕ НАЛБАНДЯН*

### Р е з ю м е

Антропологическое и этногенетическое исследование ассирийцев Верин Двина показало большую близость всех изученных маркеров с разными армянскими группами, а также с обобщенной армянской популяцией. Соматологические, одонтологические и дерматоглифические признаки проявляют себя как “арменоидный” расоводиагностический комплекс. Это говорит о большом соотношении общих предковых генов, которое сохранилось до наших дней.

## ETHNOGENETIC RESEARCH OF THE ASSYRIANS LIVING IN ARMENIA (On the anthropological data of the Assyrians of Verin Dvin)

*NVARD KOCHAR, ANNA PALIKYAN, KARINE NALBANDYAN*

### S u m m a r y

The anthropological and ethnogenetic researches of Verin Dvin Assyrians show the very close proximity of all markers to different Armenian groups as well as to summarized Armenian population. Somatological, odontological and dermatoglyphical signs become apparent as “armenoid” race diagnostic complex. This indicates that very high percentage of common ancestors’ genes have remained up to our days.